

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ

ռեկտոր, ք.գ.դ., պրոֆեսոր

----- Խաչատրյան Գ.Կ.

‘-----’ ----- 2014թ.

ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ
2014-2018թթ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ, ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. 1. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ

1.2. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.3. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

II. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2.2. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2.3. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

2.4. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

2.5. ՍՈՑԻԱԼ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2.6. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

2.7. ԿԱՐԻԵՐԱՑԻ ԵՎ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

III . ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՆԱԽԱԲԱՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ, ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարանը (այսուհետ՝ Համալսարան): Համալսարանը կրթական և գիտական գործունեություն իրականացնող պետական հաստատություն է, որտեղ մասնագիտական կրթական ծրագրերը մշակված են վերջնարդյունքների հիման վրա և իրականացվում են որակավորումների ազգային շրջանակի բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի մակարդակով:

ՏԵՍԼԱԿԱՆԸ: ՎՊՀ-ի տեսլականն է՝ ձգտել բավարարել աշխատաշուկայի պահանջները՝ պատրաստելով կոմպետենտ մասնագետներ, և դառնալ ՀՀ հյուսիսային տարածաշրջանի կայուն զարգացում ապահովող, կրթական ծառայություններ մատուցող և գիտական հետազոտություններ իրականացնող առաջատար կենտրոն:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

1. Համալսարանը, ձգտելով ապահովել կայուն զարգացում, կրթական և գիտական գործունեության իրականացման հիմքում դնում է շահագրգիռ կողմերի կարիքների բավարարմանն ուղղված քաղաքականություն:
2. Համալսարանը, ձգտելով պատրաստել հիմնարար և կիրառական գիտելիքներով, գործնական հմտություններով օժտված կոմպետենտ մասնագետներ, ձևավորում է ուսանողակենտրոն միջավայր, որտեղ ուսանողը հանդես է գալիս որպես կրթական գործընթացի սուբյեկտ:
3. Համալսարանը, ընդունելով հասարակության առջև իր պատասխանատվությունը, նպաստում է անհատի շարունակական զարգացմանը, ստեղծում է նպաստավոր միջավայր համակողմանի զարգացած անձի ձևավորման համար:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. 1. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ

Պատմական ակնարկ: Համալսարանը Հայաստանի Հանրապետության ճանաչված բուհերից է, հյուսիսային տարածաշրջանի կրթության, գիտության և մշակույթի ամենամեծ կենտրոնը: Վանաձոր (նախկինում՝ Կիրովական) քաղաքի և Հայաստանի հյուսիսային շրջանների կրթական հաստատությունները մանկավարժական կադրերով ապահովելու նպատակով ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի 1969 թ. հուլիսի 9-ի որոշմամբ Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտը տեղափոխվել է Կիրովական՝ վերանվանվելով Կիրովականի պետական մանկավարժական ինստիտուտ:

Իր պատմության ընթացքում համալսարանը պատրաստել է բարձրագույն կրթության որակավորում ունեցող 24000-ից ավելի մասնագետներ: Համալսարանի շրջանավարտների թվում կան Հայաստանի Հանրապետությունում և նրա սահմաններից դուրս հայտնի գիտնականներ, կրթության ոլորտում բարձր որակավորում ունեցող մասնագետներ, մշակույթի և սպորտի գործիչներ, օլիմպիական և աշխարհի չեմպիոններ, գործարարներ, քաղաքական գործիչներ:

Ներկա վիճակը: Հիմնադրման առաջին տարիներից մինչ օրս համալսարանում գործում են հինգ ֆակուլտետներ՝ պատմաաշխարհագրական, բանասիրական, մանկավարժության, ֆիզիկամաթեմատիկական, կենսաբանաքիմիական: Ներկայումս կրթություն է իրականացվում բակալավրի հիմնական կրթական ծրագրի 30-ից ավելի մասնագիտություններով, այդ թվում և համալսարանական մասնագիտություններով: Սկսած 2008թ.-ից ներդրված է մագիստրոսական կրթության համակարգը՝ մասնագիտություններով: Պրոֆեսորադասախոսական համակազմի հերթափոխն ապահովելու նպատակով 2006թ.-ից Համալսարանում գործում է ասպիրանտուրայի բաժինը:

Կրթական նոր կառույցներից են քոլեջը, հենակետային վարժարանը՝ հումանիտար, բնագիտական և ֆիզիկամաթեմատիկական հոսքերով:

Համալսարանում իրականացվում են լայնածավալ կրթական բարեփոխումներ, որոնց վերջնական նպատակը 21-րդ դարի մարտահրավերներին համապատասխանող որակյալ կրթության ապահովումն է: Անցկացվող բարեփոխումներն իրենց բովանդակությամբ համապատասխանում են Բոլոնյան գործընթացի հիմնական սկզբունքներին:

Համալսարանում գործող 5 ֆակուլտետները սպասարկվում են 18 ամբիոնների կողմից, ուսանողների թիվը հասնում է 3500-ի: Համալսարանում դասավանդող 265 դասախոսների 57%-ն ունի գիտական աստիճան և/կամ կոչում, հիմնական կազմի՝ 195 -ի՝ 74%-ը:

Վերջին տարիներին նկատվում է գիտական գործունեության առաջընթաց: Անցկացվել են հանրապետական և միջբուհական բազմաթիվ գիտաժողովներ, այդ թվում նաև՝ երիտասարդ գիտնականների և հետազոտող ուսանողների: Համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների կողմից պաշտպանվել են դոկտորական, թեկնածուական թեզեր, տպագրվել են բազմաթիվ մենագրություններ և գիտական հոդվածներ:

Համալսարանում ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների խթանման և բարելավման նպատակով ստեղծվել են առարկայական կաբինետներ, անհրաժեշտ սարքավորումներով հագեցած հետազոտական համալիր լաբորատորիա, ժամանակակից համակարգիչներով և այլ տեխնիկական միջոցներով հագեցած ՀՀ և ՌԴ ակադեմիկոս Ս. Մերգելյանի անվան համակարգչային կենտրոն: Վերջին տարիներին ստեղծվել են օտար լեզուների ուսուցման, մշակույթի, հոգեբանական, իրավաբանական խորհրդատվությունների, կարիերայի և հեռավար կրթության, որակի ապահովման, մարզաճամբաստանային և սպորտային կենտրոնները, ինչպես նաև իրավաբանական, լրատվության և տպագրության բաժինները և այլն:

Համալսարանի աշխատակիցների և ուսանողության ֆիզիկական առողջության պահպանման նպատակով գործում են մարմնակրթության դահլիճը, մարզահրապարակը, հրաձգարանը: Շահագործման է հանձնվել Համալսարանի՝ Բազումի ուսումնամարզական համալիրը, որտեղ ստեղծված են պայմաններ ուսանողների և աշխատակիցների գիտաուսումնական գործունեության, սպորտային մարզումների և հանգստի համար: Գործում է նաև ուսանողական ճաշարանը:

1.2. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներկա վիճակի վերլուծություն: Այժմ Համալսարանում ակտիվորեն ընթանում է ներդրված համալսարանական ՄԿԾ-ների բարեփոխման գործընթացը: Համալսարանի գործունեությունը նպատակաուղղված պիտի լինի ժամանակակից աշխատաշուկայի պահանջները բավարարող որակյալ կրթության ապահովմանը:

Համալսարանի գործունեությունը կրթական նորարարական տեղեկատվական տեխնոլոգիաների, հարուստ մանկավարժական փորձի, անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի և կառավարման ժամանակակից ոճի համադրումն է: Ներկայումս Համալսարանի գործունեության հիմնական ձեռքբերումը ուսուցման կրեդիտային համակարգի ներդրումն է բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրերում, ինչը բխում է Բոլոնյան գործընթացի սկզբունքներից: Ուսումնական գործընթացի բարեփոխման շրջանակներում

ձևավորվել է նոր նորմատիվային բազա (կրթական ծրագրեր, կանոնակարգեր, ընթացակարգեր, ուսանողների գիտելիքների գնահատման նոր համակարգ և այլն):

Համալսարանում մշտապես իրականացվում են աշխատանքներ ուսումնական գործընթացում նորարարական մեթոդների և ձևերի, կրթական ինտերակտիվ մեթոդների ներդրման ուղղություններով:

Համալսարանում ձևավորված է որակի ապահովման մշակույթ: Համալսարանում ձևավորվել է զարգացող մրցակցային միջավայր: Համալսարանի գործունեության կարևորագույն ուղղությունը սպառողների ակնկալիքների, սպասումների և պահանջարկի ուսումնասիրումը, գնահատումը և բավարարումն է: Այդ նպատակով Համալսարանում պարբերաբար իրականացվում է մշտադիտարկում: Ամեն տարի անցկացվում են հարցումներ ուսանողների և նրանց ծնողների, դասախոսների, աշխատակիցների, շրջանավարտների, գործատուների շրջանում:

Համալսարանի գործունեության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին խոչընդոտները և ներքին հնարավորությունները, ինչպես նաև առանձին ոլորտների զարգացման ռազմավարական ծրագրերով նախանշված կոնկրետ միջոցառումները ներկայացված են SWOT վերլուծության տեսքով:

Ուժեղ կողմերը

1. Պետական կրթական հաստատության դիրք.
2. մրցունակության բարձր մակարդակ՝ առաջատար դիրք տարածաշրջանի այլ բուհերի նկատմամբ.
3. գիտական աստիճան և/կամ կոչում ունեցող պրոֆեսորադասախոսական կազմի բավարար տեսակարար կշիռ.
4. կրթական ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազա.
5. համալսարանի կառավարումը մասնակցային սկզբունքով.
6. գիտատեղագրական գործունեության զարգացման բարենպաստ պայմաններ:

Թույլ կողմերը

1. Ուսանողների թվաքանակի նվազում.
2. հեռավար և դրսեկության համակարգով ուսուցման բացակայություն.
3. ֆինանսական ռեսուրսների նվազում և ֆինանսական աուդիտի բացակայություն.
4. աշխատակազմի թույլ մոտիվացիա՝ պայմանավորված սոցիալական ծանր իրադրությամբ.
5. երիտասարդ մասնագետների համար գիտական գործունեության ոչ գրավիչ դիրք՝ պայմանավորված ցածր վարձատրությամբ:

Հնարավորությունները.

1. Համալսարանի վարկանիշի բարձրացում կրթական համակարգում.
2. շուկայի պահանջներին համահունչ բարձրորակ, գործնական հմտությունների տիրապետող մասնագետների պատրաստում.
3. գիտական աստիճան և/կամ կոչում ունեցող պրոֆեսորադասախոսական կազմի որակի բարձրացում.
4. ուսանողակենտրոն կրթական միջավայրի ձևավորում.
5. համալսարանի կառավարման համակարգի կատարելագործում.

Ուժեղ կողմերն օգտագործելուն ուղղված միջոցառումներ՝ հնարավորությունների ընդլայնման նպատակով

1. Գործատուների ներգրավում մրցունակ մասնագետների պատրաստման կրթական ծրագրերի մշակման գործընթացներում.
2. պրոֆեսորադասախոսական անձնակազմի որակավորման և վերաորակավորման արդյունավետության գնահատման բազմակողմանի համակարգի ձևավորում.
3. գիտության և կրթության կապի խորացում.
4. գրադարանային-տեղեկատվական ցանցի արդիականացում և ընդլայնում.
5. համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրում և կրթական ծրագրերի հավատարմագրման թիմային աշխատանքի իրականացում.
6. ուսանողների համար կրթական ռեսուրսների և ինքնակրթության համար տեխնոլոգիաների մատչելի պայմանների ապահովում:

Ուժեղ կողմերն օգտագործելուն ուղղված միջոցառումներ՝ սպառնալիքներից խուսափելու նպատակով

1. ՀՀ -ում ինստիտուցիոնալ հավատարմագրման ապահովում,
2. Համալսարանի ռազմավարական ծրագրերին համապատասխան զարգացում,
3. Ուսումնական գործընթացում անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների արդյունավետ օգտագործման ապահովում,
4. Խրախուսման համակարգի զարգացում,
5. Աշխատաշուկայի կարիքների մոնիթորինգի համակարգի ստեղծում:

Թույլ կողմերի ազդեցության նվազեցմանն ուղղված միջոցառումներ սպառնալիքներից

խուսափելու նպատակով

1. Դպրոցների շրջանավարտների պատրաստմանն ու մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքների մեթոդների բարելավում,
2. “Դպրոց-բուհ-աշխատաշուկա” հետադարձ կապերի ապահովում, զարգացում և ընդլայնում,
3. Հասարակության համար Համալսարանի գործունեության թափանցիկության ապահովում,
4. Համալսարանի վարկանիշի անընդհատ բարձրացում:
5. Ներկայումս ՀՀ բարձրագույն կրթական համակարգի զարգացման միտումները ձևավորվում են հետևյալ գործոնների ազդեցության ներքո.
6. կրթական ծառայությունների որակի, շրջանավարտների հմտությունների, ունակությունների, բարձր արհեստավարժության և հիմնարար գիտելիքների նկատմամբ պահանջների բարձրացում.
7. Հայաստանի կրթական ծառայությունների շուկայում բուհերի միջև մրցակցության աճ.
8. կրթության միջազգայնացում.
9. Վերոհիշյալ միտումներն անհրաժեշտ է դիտարկել բարձրագույն կրթության համակարգում գոյություն ունեցող և լուծում պահանջող խնդիրների հետ փոխկապակցվածության մեջ, մասնավորապես՝
10. բարձրագույն կրթության ունեցող մասնագետների որակի անհամապատասխանությունն աշխատաշուկայի պահանջներին,
11. թույլ կապ կրթության և աշխատաշուկայի միջև,
12. մասնագետների պատրաստման և ատեստավորման գործընթացներում գործատուների ներգրավվածության անբավարարություն,
13. կրթական ծրագրերի միջազգային հավատարմագրման և բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման բացակայություն,
14. ուսանողների և դասախոսների շարժունության ցածր մակարդակ:

Այսօր Համալսարանի ռազմավարությունը նպատակաուղղված է կրթական ծառայությունների մատուցման որակի համապատասխանեցմանը միջազգային չափորոշիչներին: Այս տեսլականով է Համալսարանը ծավալում իր գործունեությունը, որը միտված է կրթական գործընթացի բարեփոխմանը՝ համաձայն Բոլոնյան հռչակագրի սկզբունքների:

Հաշվի առնելով ՀՀ բարձրագույն կրթության համակարգի զարգացման միտումները, առկա խնդիրների լուծման անհրաժեշտությունը, SWOT վերլուծության արդյունքները՝ Համալսարանի 2014-2018 թթ. զարգացման *նպատակը և խնդիրներն են՝*

1. կրթական նորագույն տեխնոլոգիաների զարգացում ու կատարելագործում,
2. Համալսարանի ինստիտուցիոնալ և կրթական ծրագրերի հավատարմագրման ապահովում,
3. տեղեկատվական տեխնոլոգիաների դերի բարձրացումը և ուսումնամեթոդական հենքի կատարելագործում՝ հանրապետական և համաշխարհային միտումներին համապատասխան,
4. կրթության որակի ապահովման ներքին համակարգի կատարելագործում՝ համաձայն արտաքին գնահատման սկզբունքների և չափորոշիչների,
5. կրթական գործունեության թափանցիկության ապահովում կրթական գործընթացում գործատուների ներգրավվածության ապահովման միջոցով,
6. բարձրակարգ կադրերի պատրաստում մագիստրատուրայում և ասպիրանտուրայում,
7. բուհական գիտության հետագա զարգացում և ակադեմիական գիտության հետ կապերի ամրապնդում,
8. ուսանողների դաստիարակվածության, կրթվածության, արհեստավարժության դերի բարձրացում, նրանց կողմից համամարդկային արժեքների կարևորում,
9. ուսանողների ընդհանուր քաղաքական, իրավական մշակույթի ձևավորում:

1.3. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համալսարանը կրթական ծառայություններ է մատուցում տարածաշրջանային և հանրապետական մակարդակներով՝ համաձայն բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթության պետական կրթական չափորոշիչների՝ ուսուցման առկա և հեռակա համակարգերում, պետական կրթական պատվերի շրջանակներում և վճարովի հիմունքներով: Ծարունակական կրթության սահմաններում բուհն իրականացնում է ուսուցում ՈԱՇ-ի 4-8-րդ կրթական մակարդակներում՝ ավագ դպրոց, քոլեջ, բակալավրիատ, մագիստրատուրա և ասպիրանտուրա: Նույն նպատակով Համալսարանում կազմակերպվում են հետբուհական կրթության, դպրոցի ուսուցիչների որակավորման բարձրացման, բուհ ընդունվողների նախապատրաստական դասընթացներ:

Մրցակցային դիրքի գնահատումը կրթական ծառայությունների շուկայում

Այսօր Համալսարանը կրթական ծառայություններ է մատուցում բարձր մրցակցության դաշտում: Հանրապետության հյուսիսային տարածաշրջանում գործում են պետական մի շարք

բուհերի մասնաճյուղեր և մասնավոր բուհեր: Այս պայմաններում Համալսարանը կարողանում է ապահովել առաջնային դիրք ոչ միայն մանկավարժական կադրերի, այլ նաև աշխատաշուկայի պահանջները բավարարող այլ մասնագետների պատրաստման բնագավառում: Համալսարանը կադրերով ապահովում է Վանաձորը և ՀՀ հյուսիսային տարածաշրջանը՝ ամեն տարի թողարկելով 800-ից ավելի բակալավրներ և մագիստրոսներ:

Կրթական ծառայությունների որակի նկատմամբ ներկայացվող պահանջները

Համալսարանի կրթական ծառայությունների որակին ներկայացվող պահանջները սահմանված են բակալավրի և մագիստրոսների պատրաստման պետական կրթական չափորոշիչներով:

Պահանջներն առավել հստակ ներկայացվում են ՄԿԾ-ներում:

Համալսարանը մասնագետների պատրաստման գործում ղեկավարվում է հետևյալ սկզբունքներով.

- Համալսարանի կրթական գործունեությունը պետք է ունենա փոփոխվող միջավայրին արագ հարմարվելու ունակություն:

- Բակալավրների, մագիստրոսների և ասպիրանտների պատրաստումը պետք է իրականացվի ուսուցման նորարարական մեթոդների կիրառման, ժամանակակից արդյունավետ մեթոդների վրա հիմնված ուսուցման տեխնոլոգիաների և հատուկ միջոցների օգտագործմամբ:

- Համալսարանի շրջանավարտը պետք է ունենա այնպիսի բարոյական հատկանիշներ, ինչպիսիք են՝ հայրենասիրություն, հարգանք պետական խորհրդանիշերի, ազգային ավանդույթների նկատմամբ, անհանդուրժողական վերաբերմունք հակասահմանադրական և հակահասարակական դրսևորումների նկատմամբ:

- Համալսարանի՝ մասնագետների պատրաստմանն ուղղված գործունեությունը պետք է նպաստի ուսանողների անձի ստեղծագործական, հոգևոր և ֆիզիկական հնարավորությունների զարգացմանը, բարոյականության, առողջ կենսակերպի ամուր հիմքերի ձևավորմանը, հանրապետության հասարակական-քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին մասնակից լինելու պահանջմունքի ձևավորմանը:

- Համալսարանի սոցիալական դաստիարակչական գործունեությունը պետք է ուղղված լինի անհատի՝ իր իրավունքների և պարտականությունների նկատմամբ գիտակցված վերաբերմունքի, համաշխարհային և ազգային մշակույթի ձեռքբերումներին հաղորդակից լինելուն, Հայաստանի պատմության, սովորույթների և ավանդույթների, հայերենի՝ որպես պետական լեզվի նկատմամբ պատշաճ վերաբերմունքի ձևավորմանը:

II. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2.1. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվի առնելով Համալսարանի գործունեության վերլուծության արդյունքները՝ նախատեսվում է սկսել հասարակության արդի պահանջներին և եվրոպական չափանիշներին համապատասխանող կրթական ծառայությունների մատուցման գործընթաց՝ այն կողմնորոշելով դեպի ուսուցման ուսանողակենտրոն համակարգի ստեղծումը:

Համալսարանի 2014-2018 թթ. զարգացման ռազմավարության նպատակն է բավարարել աշխատաշուկան բարձրագույն կրթությամբ մասնագետներով՝ ապահովելով գիտամանկավարժական կադրերի պատրաստման կենտրոնի դիրքերի պահպանումն ու ամրապնդումը որակավորման բարձրացման և վերաորակավորման գործում:

Համալսարանի կրթական գործունեության նպատակը աշխատաշուկայում մրցունակ, արհեստավարժ, բարձրակարգ մասնագետների պատրաստումն է:

2014-2018թթ. Համալսարանի կրթական գործունեության զարգացումն իրականացվելու է հետևյալ ուղղություններով՝

- ✓ Բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի արդիականացում.
- ✓ Հեռավար և դրսեկության համակարգով ուսուցման ուսումնա-մեթոդական համալիրի ստեղծում.
- ✓ Մագիստրատուրայի կրթական ծրագրերի բովանդակային մասի կատարելագործում, ասպիրանտական կրթության կազմակերպում,
- ✓ Աշխատաշուկայի կարիքներին համահունչ համալսարանական ՄԿԾ-ների մշակում և ներդրում.
- ✓ Դիպլոմի հավելվածի միջազգային ճանաչման իրականացում.
- ✓ Միջազգային ուսումնական և գիտատեխնիկական ծրագրերի իրականացում.
- ✓ Ուսուցման ոլորտում տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման արդյունավետության բարձրացում.
- ✓ Կրեդիտային համակարգի կատարելագործում և շարժունության ակտիվացում, կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի զարգացում.
- ✓ Գնահատման համակարգի կատարելագործում.
- ✓ Համակարգչային և լեզուների ուսուցման դասընթացների կազմակերպում.
- ✓ Ցկյանս կրթական ծրագրերի իրականացում.
- ✓ Լրացուցիչ կրթության կատարելագործում:

Համալսարանում ստեղծվել է լրացուցիչ կրթության բաժին, որն ապահովում է պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման, շարունակական վերապատրաստման և որակի բարձրացման գործընթացները: Իրականացվում է կրեդիտային համակարգով կազմված որակավորման բարձրացման ծրագիրը, որը դասախոսին հնարավորություն է տալիս բարձրացնելու որակավորումը՝ ժամանակակից միջազգային չափանիշներին համապատասխան՝ ապահովելով նրա համար նախընտրելի կոմպետենցիաների զարգացումը:

Դասախոսների որակավորման բարձրացման ծրագիրը բաղկացած է երկու հիմնական կառուցամասերից՝ կրթական և հետազոտական-մեթոդական, որոնցից յուրաքանչյուրով նախատեսված աշխատանքներն իրականացվում են հնգամյա ժամկետում՝ համաձայն ունկնդրի որակավորման բարձրացման անհատական ծրագրի: Ելնելով իր նախասիրություններից՝ ունկնդիր դասախոսն ինքն է որոշում կրթական և հետազոտական-մեթոդական կառուցամասերի հարաբերակցությունն ու բովանդակությունը՝ արտացոլելով դրանք իր անհատական ծրագրում:

Լրացուցիչ կրթության զարգացման ռազմավարական ուղղություններն են՝

1. մասնագիտական պատրաստվածություն,
2. մանկավարժահոգեբանական պատրաստվածություն,
3. օտար լեզուների իմացության շարունակական կատարելագործում
4. տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման իմացություն,
5. իրավագիտական պատրաստվածություն,
6. որակավորման բարձրացման այլ ձևեր:

2.2. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Համալսարանը, բացի կրթական գործունեությունից, իրականացնում է նաև գիտահետազոտական գործունեություն, որի հիմնական նպատակներն են՝

- ✓ առավելագույնս ներդրում ունենալ երկրի անվտանգության ապահովման, տնտեսական աճի, գիտատեխնիկական զարգացման, հասարակական առաջընթացի և մրցունակության բարձրացման մեջ,
- ✓ ապահովել գիտական բարձր որակավորում ունեցող մարդկային ռեսուրսների կայուն աճ,
- ✓ ապահովել երիտասարդ կադրերի ներհոսք գիտության ոլորտ և իրականացնել գիտական ներուժի կառավարելի, սահուն սերնդափոխություն,
- ✓ ապահովել հայագիտության ոլորտի զարգացման առաջնահերթություն:

Նշված նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ է՝

- ✓ զգալիորեն ավելացնել գիտության ֆինանսավորման ծավալները, հստակեցնել ֆինանսավորման ձևերը և մեխանիզմները, բարձրացնել ֆինանսավորման արդյունավետությունը,
- ✓ արդիականացնել, որոշ դեպքերում նաև ստեղծել գիտության ոլորտի նոր ենթակառուցվածքներ, նյութատեխնիկական բազա, ապահովել գիտնականներին լիարժեք տեղեկատվությամբ,
- ✓ հստակեցնել գիտության զարգացման գերակայությունները,
- ✓ ստեղծել և կիրառել գիտության ոլորտի գիտական անկախ փորձաքննության համակարգ,
- ✓ ապահովել գիտության և կրթության ինտեգրումը:

Որպես համալսարանի հիմնարար և կիրառական հետազոտությունների ոլորտի ռազմավարության զարգացման ուղեկցող արդյունք՝ պահանջվում է՝

1. հանրապետական և միջազգային գիտաժողովների կազմակերպում,
2. մասնագիտական խորհուրդների ստեղծում,
3. մագիստրանտների և ասպիրանտների (հայցորդների) ներգրավում գիտահետազոտական աշխատանքներում,
4. գիտական և գիտամեթոդական գրականության տպագրության ծավալների ընդլայնում և տարածում,
5. գիտական արդյունքների առևտրայնացում և դուրսբերում արտաքին և ներքին շուկա,
6. երիտասարդ գիտական կադրերի աճը խթանող ծրագրերի մշակում,
7. ուսանողների ներգրավվածությունը գիտաժողովներին, սեմինարներին, մրցույթներին,
8. աշխատակիցների գիտական գործողումների իրականացում,
9. համագործակցություն ՀՀ ԳԱԱ ճյուղային ինստիտուտների և հետազոտական կենտրոնների հետ:

Մինչև 2019թ. ընկած ժամանակահատվածում համալսարանի գիտական հետազոտությունների զարգացման հիմնական պահանջը դրանց պլանավորումն ու հաստատուն զարգացումը, գիտական արդյունքների ներդրումն է:

2.3. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Համալսարանի որակի ապահովման խնդրի արդիականությունը պայմանավորված է գործընթացներով, որոնք այսօր տեղի են ունենում ՀՀ բարձրագույն կրթության համակարգում, այն է՝

- ✓ Բոլոնյան գործընթացի հիմնադրույթների զարգացում, դրանց իրականացման խթանում և ուղղորդում դեպի որակի ապահովման եվրոպական չափանիշներ:
- ✓ Ոսկի ապահովման նկատմամբ Համալսարանի պատասխանատվության բարձրացում՝ որակի ապահովման ներքին համակարգի կատարելագործման միջոցով:
- ✓ Գիտելիքահեն տնտեսության և աշխատաշուկայի պահանջներին և կարիքներին համապատասխան ուսումնական ծրագրերի վերանայում և արդիականացում:

Վերոհիշյալ գործընթացները հիմք են հանդիսանում որակի ապահովման ոլորտում բուհի զարգացման ռազմավարական ուղղությունների և համապատասխան ռազմավարական ծրագրերի մշակման համար, որոնց հիմնական նպատակը որակի ապահովման ներքին համակարգի ձևավորումն է:

Որակի ապահովման բնագավառում Համալսարանի ռազմավարական նպատակներն են՝

- ✓ աջակցել բուհի հանրային վստահության, պատասխանատվության, մրցունակության ապահովմանը և որակյալ մասնագետների պատրաստմանը,
- ✓ աջակցել մատուցվող կրթական ծառայությունների կատարելագործմանը շահակիցների կարիքների վերհանման միջոցով,
- ✓ պարբերաբար իրականացվող մշտադիտարկման միջոցով բացահայտել ուսանողների, դասախոսների կարիքները և աջակցել դրանց լուծման մեխանիզմների մշակմանը և ներդրմանը,
- ✓ աջակցել ուսանողակենտրոն կրթական միջավայրի ձևավորմանը,
- ✓ նպաստել ուսանողների և դասախոսների շարժունության մեխանիզմների կատարելագործմանը:

Որակի ապահովման բնագավառում Համալսարանի ռազմավարական խնդիրներն են՝

1. բացահայտել Համալսարանի շահակիցների կարիքները և աջակցել դրանց բավարարմանը,
2. աջակցել մասնագիտական կրթությունը որակի ապահովման միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու գործընթացին,
3. նպաստել մասնագիտական կրթության մատչելիությանը և իրականացման թափանցիկությանը,
4. արժևորել շահակիցների հետ սերտ համագործակցությունը որակի ապահովման մշակման գործում:
5. աջակցել Համալսարանի կրթական ծրագրերի հավատարմագրմանը,
6. նպաստել Համալսարանի կառավարման համակարգերի բարեփոխումներին:

2.4. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ և ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

2.4.1. Կրթության բնագավառում Համալսարանի միջազգային համագործակցության կարևորագույն խնդիրներից մեկը իր ստեղծած բարձրագույն կրթության համակարգի ինտեգրումն է համաշխարհային կրթական տարածք: Ներկայումս Համալսարանը համագործակցության պայմանագրեր և համաձայնագրեր է ստորագրել ինչպես արտասահմանյան բարձրագույն կրթական հաստատությունների, այնպես էլ միջազգային կազմակերպությունների հետ:

Համալսարանի դասախոսներն ու ուսանողներն ունեն հնարավորություն մասնակցելու արտասահմանյան բուհերում անցկացվող միջազգային գիտագործնական գիտաժողովներին:

Բարձրագույն կրթությունն ու գիտությունը դարձել են հասարակական զարգացման համաշխարհային գործոն և դասվում են ազգային ու համաշխարհային առավել կարևոր առաջնահերթությունների թվին, ինչը պահանջում է միջազգային գործունեության իրականացման հենքային սկզբունքների իմացություն:

Համալսարանի միջազգային գործունեության զարգացման ծրագրի գերակա ուղղություններն են՝

1. կրթական ծառայությունների մրցունակության ապահովումը աշխատաշուկայում,
2. Համալսարանի՝ որպես ուսումնական և գիտական բարձրակարգ կենտրոնի՝ միջազգային հեղինակության բարձրացում,
3. Համալսարանի կրթական և գիտական գործունեության որակի ապահովում,
4. միջազգային ծրագրերին ակտիվ մասնակցություն,
5. արտասահմանյան երկրների հայազիտական կենտրոնների հետ համագործակցություն,
6. ուսանողների և դասախոսների շարժունության ընդլայնում՝ Բոլոնիայի հռչակագրի համաձայն:

2.4.2. Տեղեկատվական ոլորտ: Երկրի կրթական տարածքի միասնականությանը, համաշխարհային կրթական տարածք դրա ինտեգրմանը նպաստող տեղեկատվական միջավայրի ստեղծման և զարգացման նպատակով բուհում ձեռնարկվել է ուսումնական և օժանդակ ստորաբաժանումների համակարգչային տեխնիկայով հագեցման լայնածավալ գործընթաց, բացվել է համալիր լաբորատորիա և ինտերնետ կապով ապահովված գիտական կաբինետ. ինտերնետ կապը հասանելի է վարչական անձնակազմին, բոլոր ամբիոններին և գրադարանին:

Համալսարանի նպատակն է հասնել բուհի համակարգչային հագեցվածության եվրոպական չափորոշիչներին՝ մեկ համակարգիչ 3-4 ուսանողի համար: Համալսարանն ունի նաև ժամանակակից տեխնիկական միջոցներով հագեցած լսարաններ, ուսումնական ինտերակտիվ միջոցների բավարար քանակություն:

Կրթության գործընթացի տեղեկատվական աջակցության կատարելագործման համար անհրաժեշտ է՝

1. կրթական ծրագրերին և գործընթացներին աջակցող էլեկտրոնային տեղեկատվական ուսումնամեթոդական նյութերի համալրում,
2. ուսանողների համար կրթական և տեղեկատվական ինտերնետ-ռեսուրսների, այդ թվում նաև հեռավար ուսուցման ուսումնական ծրագրերի ստեղծում,
3. հեռավար ուսուցման ներդրումն ապահովող պայմանների ստեղծում,
4. կրթական գործընթացներում տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ուղղությամբ դասախոսների որակավորման բարձրացում:

2.5. ՍՈՑԻԱԼ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2.5.1. Կրթական գործընթացում մեծ ուշադրություն է դարձվում անձի հոգևոր-բարոյական որակների զարգացմանը:

Պետության սոցիալական պատվեր՝ կրթված, բարոյական, նախաձեռնող, ինքնուրույն որոշումներ կայացնող, համագործակցության և միջմշակութային փոխգործունեությանն ընդունակ, երկրի ճակատագրի նկատմամբ պատասխանատվության զգացում ունեցող անձի դաստիարակումն է: Անձի ձևավորման, զարգացման և մասնագիտական կայացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, կրթության և բազմակողմանի զարգացման, մայրենի լեզվի, մշակույթի, ազգային սովորույթների և ավանդույթների պահպանման, տեղեկացվածության, առողջ ապրելակերպի իրավունքի իրականացումը կրթության համակարգի գլխավոր խնդիրն է: Համակարգն ընդհանուր առմամբ ուղղված է ուսանողի՝ որպես ՀՀ քաղաքացու դաստիարակությանը և նրա սահմանադրական իրավունքների ապահովմանը: Առավել առաջնահերթ խնդիր է անհատի ինքնազարգացումը:

Համալսարանի սոցիալ-դաստիարակչական զարգացման ռազմավարության նպատակներն ու խնդիրներն են՝

1. մշտական ուշադրություն աճող սերնդի դաստիարակության հարցերին,
2. ուսանողների գործունեության կազմակերպում՝ ուղղված սեփական անձի կատարելագործմանը՝ որպես ուսուցման և դաստիարակության սուբյեկտի,
3. համամարդկային արժեքների հաստատումն ու դաստիարակությունը,
4. հայրենասիրության, մարդասիրության, մարդ-քաղաքացու որակների դաստիարակումը,
5. պետականության գաղափարի դաստիարակությունը
6. հայրենասիրության, ազգերի նկատմամբ հանդուրժողականության դաստիարակությունը,
7. ընդհանուր քաղաքական և իրավական մշակույթի ձևավորում,

8. դաստիարակվածության, կրթվածության, արհեստավարժության կարևորության բարձրացում,
9. բարոյական և գեղագիտական դաստիարակություն,
10. աշխատասիրության դաստիարակում,
11. ուսանողների ֆիզիկական զարգացման և առողջության բարելավում:

2.5.2. Համալսարանը, համաձայն իր կանոնադրության, պետք է իրականացնի նաև մշակութային գործունեություն:

Մշակութային գործունեության ռազմավարական խնդիրներն են՝

1. Ազգային և համամարդկային արժեքների տարածում
2. Ազգային, բնական, պատմամշակութային արժեքների պահպանման գիտակցության արմատավորում
3. Տարածաշրջանի պատմամշակութային հուշարձանների պահպանում
4. Հայրենասիրության, այլ ազգերի նկատմամբ հանդուրժողականության քարոզում
5. Էթնիկական և մշակութային բազմաձևությունը ճանաչող անհատի դաստիարակում
6. Մասնագիտական խնդիրների լուծմանը պատրաստ բազմամշակութային արժեքներ կրող անհատի ձևավորում

2.6. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

2.6.1. Համալսարանի՝ անձնակազմի զարգացմանն ուղղված ինստիտուցիոնալ քաղաքականության կարևորագույն նպատակները և խնդիրներն են՝

- ✓ կադրերի հստակ պլանավորում, սահուն սերնդափոխության ապահովում,
- ✓ աշխատանքային հաջողությունների խթանման և խրախուսման միջոցների ապահովում,
- ✓ մարդկային ռեսուրսների մասնագիտական որակավորման շարունակական բարձրացման ապահովում,
- ✓ պարտականությունների և իրավունքների հստակ բաշխում:

Թափուր տեղերի համար հայտարարվում են բաց մրցույթներ՝ համաձայն ներքին կանոնակարգերի՝ պահպանելով թափանցիկության և հավասարության սկզբունքները: Կնքվում են աշխատանքային պայմանագրեր, որոնց կցված են պաշտոնի նկարագրին համապատասխան աշխատանքային գործառույթներ: Պրոֆեսորադասախոսական կազմի ընտրությունը կատարվում է պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման կանոնակարգին համապատասխան:

Անձնակազմի իրավունքների և պարտականությունների հստակ բաշխման քաղաքականությունն իրականացվում է կադրերի կառավարման համակարգի կառուցվածքի, կանոնակարգերի և պաշտոնի նկարագրերի բովանդակության միջոցով:

Համալսարանի ղեկավարությունը պարբերաբար միջոցներ է ձեռնարկում պրոֆեսորադասախոսական անձնակազմը գիտական աստիճան և կամ կոչում ունեցող հաստիքային դասախոսներով համալրելու ուղղությամբ:

Կադրերի զարգացման ռազմավարության հիմնական նպատակները և խնդիրներն են՝

1. մարդկային ռեսուրսների պլանավորում և սերնդափոխության հաշվառում,
2. պրոֆեսորադասախոսական կազմի հ վերապատրաստում,
3. մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ծրագրերի միջոցով գիտամանկավարժական կադրերի պատրաստում,
4. պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատավարձերի տարակարգային որոշակի տարբերակում, որը կխթանի գիտության զարգացումը,
5. կառավարման համակարգում իրավական դաշտի շարունակական կատարելագործում և կանոնակարգում,
6. պրոֆեսորադասախոսական անձնակազմի երիտասարդացում սերնդափոխության և մասնագիտական որակի ապահովման նկատառումներով:

2.6.2. Համալսարանի գրադարանը պատասխանատու է գիտական և կրթական գործընթացների համար: Գրադարանը հաշվի պիտի առնի ընթերցողների փոփոխվող պահանջները, նրանց հետ աշխատանքի միջոցները և տեղեկատվական ռեսուրսների տրամադրման նոր ձևերը:

Ներկայումս գրադարանն անցել է սպասարկման և ներմուծվող գրականության մշակման գործընթացների ավտոմատացմանը: Կատարվում են աշխատանքներ՝ տեղեկատվական և համակարգչային տեխնոլոգիաների օգտագործման հենքի՝ ավանդական ծառայությունների զարգացման և սկզբունքորեն նոր ծառայությունների (էլեկտրոնային գրադարան) ստեղծման նպատակով:

Զարգացման ծրագրի հիմնական նպատակներն են՝

1. բարձրացնել գրադարանային-տեղեկատվական սպասարկման մակարդակը և արդիականացնել սպասարկման ձևերը՝ համաձայն օգտվողների անընդհատ փոփոխվող պահանջների,
2. բարձրացնել գրադարանի՝ որպես ուսումնական, գիտական և մշակութային-լուսավորական գործունեության տեղեկատվական ռեսուրսներ տրամադրողի դերը,
3. համալրել և պահպանել ավանդական գրադարանային ֆոնդերը և էլեկտրոնային ռեսուրսները,

4. նպաստել ուսանողների, դասախոսների և Համալսարանի աշխատակիցների տեղեկատվական գրագիտության մակարդակի բարձրացմանը,

5. աջակցել կրթական ռեսուրսների էլեկտրոնային գրադարանի՝ որպես ուսումնական գործընթացի տեղեկատվական լիակատար ապահովման միջոցի հետագա զարգացմանը,

2.6.3. Համալսարանի վարչատնտեսական գործունեությունն ուղղված է շենքերի և շինությունների անվտանգ շահագործման և պահպանման, լաբորատոր և տնտեսական սարքավորումների, տարբեր սարքերի տեխնիկական շահագործման ապահովմանը:

Վարչատնտեսական բաժնի կառուցվածքը և կադրային կազմը բավարար է անհրաժեշտ մակարդակով իրականացնելու վարչատնտեսական աշխատանքները:

Նյութատեխնիկական բազայի շարունակական զարգացումը պայմանավորված է կրթական բարեփոխումների պահանջներով, որակյալ մասնագետների պատրաստման գործում միջազգային չափորոշիչներով:

Ուսանողների ուսման, հանրակացարանի և հանգստի, ինչպես նաև դասախոսների աշխատանքի անվտանգության և սանիտարահիգիենիկ պայմանների շարունակական ապահովումը կարևոր ռազմավարական խնդիր է:

Համալսարանի ռազմավարական կարևորագույն խնդիրներից է նյութատեխնիկական բազայի ընդլայնումը:

2.6.4. Համալսարանի ֆինանսական վիճակը համեմատաբար կայուն է, ինչը թույլ է տալիս ժամանակակից մակարդակով իրականացնել կրթական գործընթացը, ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական հենքը և զարգացնել Համալսարանի ուսումնական նյութական հենքը, ապահովել դասախոսների և աշխատակիցների աշխատավարձերը՝ անընդհատ բարելավելով պրոֆեսորադասախոսական կազմի և աշխատակիցների սոցիալական ապահովվածությունը:

Համալսարանի ֆինանսատնտեսական գործունեության ռազմավարական խնդիրներն են.

1. մեծացնել Համալսարանի ֆինանսական միջոցների ներհոսքը.
2. Համալսարանի ֆինանսական հնարավորությունները համապատասխանեցնել ռազմավարական նպատակներին.
3. կառավարման ճկուն քաղաքականությամբ արդյունավետ օգտագործել ֆինանսական միջոցները.
4. ստեղծել Համալսարանի հիմնադրամ՝ նպաստելով ներդրումների խթանմանը.
5. հաշվարկել 2014-2018 թթ. ֆինանսական կանխատեսումները՝ պլանավորելով ֆինանսական ելքերի և մուտքերի նախահաշիվը, կազմելով երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլաններ.

6. ապահովել ֆինանսական գործունեության և հաշվետվության թափանցիկությունը:

2.6.5. Իրավական դաշտի ապահովումը կառավարման համակարգի կարևորագույն բաղադրիչն է, առանց որի հնարավոր չէ իրականացնել համակարգված կառավարում: Այդ առումով Համալսարանում առկա են 100-ից ավելի կարգեր, կանոնակարգեր, ընթացակարգեր, ու թեև դրանց մեծ մասը ստեղծվել է վերջին տարիներին, բայց քանի որ օրենսդրական դաշտը մշտապես փոփոխվող, շարժման մեջ գտնվող համակարգ է, ուստի անհրաժեշտ է ներքին իրավական ակտերը՝ կարգերը, կանոնակարգերը և ընթացակարգերը համապատասխանեցնել միջազգային պայմանագրերին և ՀՀ օրենսդրական դաշտի փոփոխություններին: Անհրաժեշտ է կանոնակարգել այն բնագավառները, որնոցում դեռևս ներքին կանոնակարգում չի կատարվել:

Իրավական զարգացման ռազմավարության խնդիրներն են՝

1. կանոնակարգել ներքին իրավական դաշտը,
2. առկա ներքին կարգերը, կանոնակարգերը ու ընթացակարգերը համապատասխանեցնել գործող ՀՀ օրենսդրական դաշտին՝ վերացնելով ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի հետ եղած հակասությունները,
3. ապահովել Համալսարանի կառավարման իրավաչափ գործունեությունը,
4. պաշտպանել Համալսարանի շահերը դատական ատյաններում, պայմանագրեր կնքելիս և այլ գործընթացներում:

2.6.6. Համալսարանում սահմանվել են փաստաթղթաշրջանառության, իրավական ակտերի ձևակերպումների, ներքին և անհատական իրավական ակտերի մատյանների վարման կարգերը, դիմումների քննարկման ժամկետները, փաստաթղթերի արխիվացման կարգը, ինչպես նաև բոլոր մյուս ստորաբաժանումների գործավարության կարգերը: Ընդհանուր բաժինը, արխիվը, մյուս ստորաբաժանումները սահմանված կարգով իրականացնում են ներքին և արտաքին փաստաթղթաշրջանառությունը: Առկա է նաև էլեկտրոնային ներքին ցանց, որով կատարվում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն:

Գործավարության զարգացման ռազմավարական խնդիրներն են՝

1. ապահովել արդյունավետ կառավարման հիմքերը՝ հրամանների նախագծերը, հրամանները, որոշումները, դրանց պարբերաբար արխիվացումը,
2. ապահովել արագ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն,
3. սահմանված ժամկետների մեջ արձագանքել դիմումներին, զեկուցագրերին, պաշտոնական նամակագրությանը:

2.7. ԿԱՐԻԵՐԱՑԻ ԵՎ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Համալսարանում գործում է կարիերայի կենտրոն, որի գործառույթներից են բազմակողմանի կապերի ձևավորումը գործատու կազմակերպությունների հետ, ինչպես նաև մեթոդական և կազմակերպչական աշխատանքները ուսանողների և շրջանավարտների հետ:

Գործատուների հետ համագործակցության նպատակները և խնդիրներն են՝

- ✓ աշխատաշուկային անհրաժեշտ բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստում,
- ✓ ուսանողների պրակտիկայի կազմակերպում,
- ✓ շրջանավարտներին աշխատանքի տեղավորման վերաբերյալ խորհրդատվություն և աջակցություն,
- ✓ մասնագետների որակավորման բարձրացում և վերաորակավորում:

Ներկայումս որոշ մասնագիտությունների կրթական ծրագրերի բովանդակությունը ոչ միշտ է համապատասխանում գործատուների պահանջներին: Էական է նաև մասնագետների պատրաստման երկարաժամկետ ռազմավարության ընտրությունը, որը հաշվի կառնի աշխատաշուկայում և կրթական ծառայությունների շուկայում կատարվող փոփոխությունները: Նման ռազմավարության հիմնավորված իրականացումը թույլ կտա Համալսարանին ժամանակին արձագանքել աշխատաշուկայի պահանջներին՝ կրթական ծրագրերում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու նպատակով: Կարևոր է նաև երկարաժամկետ գործընկերային հարաբերությունների հաստատումը տարբեր կազմակերպությունների հետ, ինչպես նաև աշխատաշուկայում շրջանավարտների դիրքը ապահովելու համար, ինչը դյուրին կդարձնի աշխատանքի որոնումը՝ ըստ ստացած մասնագիտության:

Շրջանավարտների աջակցության համակարգի հիմնական նպատակներն ու խնդիրներն են՝

1. ձևավորել համագործակցության համակարգ Համալսարանի և գործատուների միջև ,
2. ստեղծել բուհ-գործատու համագործակցության գործուն մեխանիզմներ,
3. անցկացնել մշտադիտարկում՝ Լոռու մարզում կրթական ծառայությունների և աշխատաշուկայի ներկա իրավիճակի ու զարգացման ուղղություններով,
4. համակարգել Համալսարանի ստորաբաժանումների գործունեությունը շրջանավարտներին աշխատանքի տեղավորման գործում,
5. օգտագործել տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորությունները թափուր աշխատատեղերի տվյալների բանկի նորացման և զարգացման, պրակտիկայից ակնկալվող արդյունքների, մասնագետների հմտությունների և ունակությունների, պատրաստման որակի նկատմամբ գործատուների պահանջները բավարարելու նպատակով,
6. անցկացնել համակարգված միջոցառումներ ուսանողների և շրջանավարտների հետ՝ ուղղված վերջիններիս պատասխանատվության, հաղորդակցման ունակությունների,

ինքնաներկայացման հմտությունների զարգացմանը՝ հեռանկարային աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացման նպատակով,

7. համագործակցել աշխատանքի տեղավորման մարզային և պետական ծառայությունների հետ՝ Համալսարանի ուսանողների կողմից աշխատանքի արդյունավետ որոնման նպատակով:

2.8. ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Համալսարանը հասարակության հետ կապն ապահովվում է համացանցային կայքէջի, սոցցանցերի երկու էջերի, «Ապագա մանկավարժ» երկշաբաթաթերթի, զանազան տեղեկատվական նյութերի, լրատվամիջոցների հետ համագործակցության միջոցով, որոնք ապահովում են մշտական առնչություններ հանրության հետ:

Բուհերում կատարվող աշխատանքների թափանցիկությունն ու հրապարակայնությունը սկզբունքային դեր ունեն բարձրագույն կրթության համակարգում: Համալսարանի համար հասարակության հետ կապերի զարգացման ռազմավարական առանցքային խնդիրներն են՝

1. ապահովել հասարակության հետ կապը,
2. ապահովել աշխատանքի թափանցիկությունն ու հրապարակայնությունը,
3. հանրության շրջանում նպաստել համալսարանի հեղինակության աճին,
4. վերհանել հանրային կարիքները և աշխատաշուկայի պահանջները,
5. հանրությանը մշտապես իրազեկել Համալսարանում կազմակերպվող կրթական, գիտական և մշակութային գործընթացների մասին,
6. կազմակերպել մամլո ասուլիսներ, քննարկումներ հասարակության տարբեր շերտերի հետ՝ բացահայտելով Համալսարանի թույլ կողմերը,
7. ապահովել հասարակությանը հուզող էլեկտրոնային հարցումների հնարավորությունը և պատասխանների օպերատիվությունը,
8. ապահովել շահառուների փոխադարձ կապը,
9. ապահովել շրջանավարտների հետ հետադարձ կապը:

III. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Համալսարանի ռազմավարական ծրագրի իրագործման արդյունքում կապահովվի՝

1. երկրի զարգացման պահանջներին համահունչ արդիական կրթական ծառայություններ՝ գործունեության իրականացման հիմքում դնելով շահագրգիռ կողմերի կարիքների բավարարմանն ուղղված քաղաքականությունը,
2. աշխատաշուկայում պահանջարկ ունեցող արհեստավարժ մասնագետների պատրաստում ՈԱՇ-ի տարբեր մակարդակների համար՝ բակալավր, մագիստրոս, հետազոտող,

3. ինտեգրում Եվրոպական կրթական տարածքին՝ Բոլոնյան գործընթացի հիմնական մարտահրավերներին ժամանակին արձագանքելու, միջազգային կրթական համակարգի բարելավմանն ուղղված ծրագրերի մասնակցության և կրթության որակի ապահովման մշակույթի ձևավորման միջոցով,
4. գիտական ուսումնասիրությունների բարձր մակարդակ,
5. հասարակության առջև Համալսարանի պատասխանատվության բարձրացում՝ մատուցվող ծառայությունների մատչելիության և թափանցիքության միջոցով,
6. նպաստավոր միջավայր համակողմանի զարգացած անձի ձևավորման համար: